ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/35

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Բողոքաբեր՝ «Ճանշին» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Ճանշին» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Գրիգորյանի
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ա. Բազեյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, «ՀՀ Շիրակի մարզ Արթիկի համայնքի Շինարարների փողոցի հիմնանորոգման» աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ճանշին» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 03.03.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մասնակի՝

1. «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասով, դադարեցնել 26.02.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետը և ընդունել «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում,

2. «Ճանշին» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով, դադարեցնել 26.02.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 4-րդ ենթակետը և ընդունել «Ճանշին» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշում,

3. «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով, դադարեցնել 26.02.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետը և ընդունել «Ճանշին» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 03.03.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/35 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

09.03.2020թ.-ին, 24.03.2020թ.-ին և 02.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 24.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.04.2020թ.-ին:

2. «Ճանշին» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ճանշին» ՓԲԸ-ն 03.03.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերն ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով բաց մրցույթին:

Բողոքաբերը հրավերով սահմանված ժամկետում հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ուղեկցող գրությամբ ներկայացրել է գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովի 26.02.2020թ-ի N 4 արձանագրության 4-րդ կետով բողոքաբերի ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Նույն արձանագրության 4-րդ կետով ընտրված մասնակից է ճանաչվել «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ն և 5-րդ կետով հաստատվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

26.02.2020թ.-ի պայմանագիր կնքելու մասին հայտարարության համաձայն՝ բողոքաբերի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել բանկային երաշխիքի բնօրինակը:

Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 26.02.2020թ.-ի N 4 արձանագրությունը, ինչպես նաև 26.02.2020թ.-ի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը կազմված է ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների խախտմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքաբերի կողմից հրավերով սահմանված ժամկետում հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով ուղեկցող գրությամբ ներկայացվել է գնահատող հանձնաժողովին:

Հետևաբար այն հանգամանքը, որ բողոքաբերի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել բանկային երաշխիքի բնօրինակը չի համապատասխանում իրականությանը և դա գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ, սուբյեկտիվ և կանխակալ գործությունների արդյունք է:

Նշեմ, որ գնահատող հանձնաժողովի սուբյեկտիվ և կանխակալ գործողությունները սրանով չեն ավարտվում, դրանք բացահայտ կերպով արտացոլված են նաև ընտրված մասնակից ճանաչված «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս:

Այստեղ գնահատող հանձնաժողովն անտեսել է մասնակցի կողմից Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջների խախտումը, համաձայն որի՝

հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Նմանատիպ պահանջ նախատեսված է նաև Հրավերի 4.2 կետի 4-րդ ենթակետում:

«Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի գնային առաջարկի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ վերջինս գնային առաջարկը ներկայացրել է թույլատրելի միջակայքից շեղումով, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից դիտավորյալ անուշադրության է մատնվել:

Բողոք քննող անձի համար վերը նշված խախտման փաստն առավել ակնառու դարձնելու համար այն ներկայացնում եմ ստորև բերված աղյուսակում.

Հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինները	*Հրավերին կցված ծավալաթերթով յուրաքանչյուր բաժնի համար սահմանված կշռի չափը ՀՀ դրամ*	*«Վահագն և Սամվել» ՍՊԸ –ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշով գները ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների ՀՀ դրամ*	*Շեղումը*
Քանդման աշխատանքներ	*3 520 605*	*2 985 628*	*-15.2%*
Վերականգնման աշխատանքներ L=420մ	*49 372 174*	*44 336 900*	*-10.2%*
Վերականգնման աշխատանքներ L=190մ	*18 065 296*	*15 913 942*	*-11.9%*

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տվյալ պարագայում Բողոքաբերը շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ և կանխակալ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բավարարման հասնելու օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Ճանշին» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մասնակի՝

1. «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասով, դադարեցնել 26.02.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետը և ընդունել «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում,

2. «Ճանշին» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով, դադարեցնել 26.02.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 4-րդ ենթակետը և ընդունել «Ճանշին» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշում,

3. «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով, դադարեցնել 26.02.2020թ.-ի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետը և ընդունել «Ճանշին» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.03.2020թ.-ի գրությամբ դիմել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից 03.03.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 09.03.2020թ.-ին հրավիրված նիստին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

Պատվիրատուն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի տարածքային զարացման հիմնադրամի կողմից 2020 թվականի հունվարի 31-ին հրապարակվել է ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1

ծածկագրով՝ «ՀՀ Շիրակի մարզ Արթիկի համայնքի Շինարարների փողոցի հիմնանորոգման» աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերը (այսուհետ՝ հրավեր), որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2020 թվականի փետրվարի 20-ին: Համաձայն հրավերի 2-րդ մասի 2.4 կետի՝

«Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.4 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:»

Տեղեկացնում ենք, որ «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից հայտի ապահովման բնօրինակը ներկայացվել է 2020 թվականի փետրվարի 24-ին, որի Mullbery համակարգով մուտքագրման հավաստումը ներկայացվում է կից: Գնահատող հանձնաժողովը որոշել է «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից հայտը գնահատել անբավարար և մերժել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ընթացակարգի ընտրված մասնակից «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար, քանի որ բավարարում է հրավերով սահմանված բոլոր պահանջներին, իսկ «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հաշվարկները չեն համապատասխանում հրավերով սահմանված հաշվարկին: Մասնավորապես, համաձայն հրավերի 2-րդ մասի 2.6 կետի՝

«Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

2.6 շինարարական աշխատանքների գնման դեպքում՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝ ստորագրված և excel ֆորմատով՝ ZIP ֆայլով, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել

սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել»:

«Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գնային առաջարկ 63,236,470 (առանց ԱԱՀ և շահույթ) ՀՀ դրամի չափով, որի նկատմամբ կիրառվել են հրավերով սահմանված կշիռները՝ հաշվի առնելով թույլատրելի 10%-ի շեղումը՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

Աշխատանքի անվանումը	*Կիրառված կշիռը*	*Կիրառված կշռի գումարի չափը*	*Թույլատրելի նվազագույն գինը (-10%)*	*Թույլատրելի առավելագույն գինը (+10%)*	*«ՎԱՀԱԳՆ և ՍԱՄՎԵԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը*
1	*2*	*3*	*4=3-3*10%*	*5=3+3*10%*	*6*
Քանդման աշխատանքներ	*4.96%*	*3,137,477*	*2,823,730*	*3,451,225*	*2,985,628*
Վերականգնման աշխատանքներ L=420մ	*69.58%*	*43,999,556*	*39,599,601*	*48,399,512*	*44,336,900*
Վերականգնման աշխատանքներ L=190մ	*25.46%*	*16,099,436*	*14,489,493*	*17,709,380*	*15,913,942*

Վերոգրյալը հիմնավորելու նպատակով՝ Ձեզ ենք ներկայացնում «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ ներառյալ հրավերով սահմանված կշիռները և թույլատրելի շեղման սահմանաչափերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ պահպանելով հրավերով սահմանված բոլոր նորմերը:

Կից ներկայացվում է «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը, հայտի ապահովման, ուղեկցող գրության պատճենները և վերջինիս՝ Mullbery համակարգով մուտքագրման հավաստումը, «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման, ուղեկցող գրության պատճենները և վերջինիս՝ Mullbery համակարգով մուտքագրման հավաստումը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «ՀՀ Շիրակի մարզ Արթիկի համայնքի Շինարարների փողոցի հիմնանորոգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով 31.01.2020թ.-ին հայտարարվել է «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Ճանշին» ՓԲԸ-ն և «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.02.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակիցը/ները/ հայտը/երը/ կազմել և ներկայացրել է/են/ «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, մասնակցի/ների/ կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են հայտի ապահովումները բանկային երաշխիքների տեսքով, բացառությամբ՝ «Ճանշին» ՓԲԸ-ի, որի կողմից ապահովումը ներկայացվել է հրավերով սահմանված ժամկետից ուշ:

Նույն արձանագրության համաձայն՝ «Ճանշին» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, իսկ «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

«Ճանշին» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից 18.02.2020թ.-ին տրամադրված թիվ 01-212 բանկային երաշխիքը (այսուհետ նաև՝ Երաշխիք):

Երաշխիքը 21.02.2020թ.-ով թվագրված գրությամբ «Mulberry» համակարգ է մուտքագրվել 24.02.2020թ.-ին ժամը 16:53-ին:

«Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 63 236 470 (առանց ԱԱՀ և շահույթ) ՀՀ դրամի գումարի չափով գնային առաջարկ, որի նկատմամբ կիրառվել են

հրավերով սահմանված կշիռները՝ հաշվի առնելով թույլատրելի 10%-ի շեղումը՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

Աշխատանքի անվանումը	Կիրառված կշիռը	Կիրառված կշռի գումարի չափը	Թույլատրելի նվազագույն գինը (-10%)	Թույլատրելի առավելագույն գինը (+10%)	«ՎԱՀԱԳՆ և ՍԱՄՎԵԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գինը
1	2	3	4=3-3*10%	5=3+3*10%	6
Քանդման աշխատանքներ	4.96%	3 137 477	2 823 730	3 451 225	2 985 628
Վերականգնման աշխատանքներ L=420մ	69.58%	43 999 556	39 599 601	48 399 512	44 336 900
Վերականգնման աշխատանքներ L=190մ	25.46%	16 099 436	14 489 493	17 709 380	15 913 942

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից 03.03.2020թ.-ին ներկայացված բողոքն ամբողջությամբ ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է

միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից 18.02.2020թ.-ին տրամադրված թիվ 01-212 բանկային երաշխիքը, որը 21.02.2020թ.-ով թվագրված ուղեկցող գրությամբ «Mulberry» համակարգ է մուտքագրվել 24.02.2020թ.-ին ժամը 16:53-ին՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող

աշխատանքային օրվա խախտմամբ, այն է՝ 1 (մեկ) աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Անդրադառնալով «Ճանշին» ՓԲԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիրքորոշմանը, որ «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է թույլատրելի միջակայքից շեղումով, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից անուշադրության է մատնվել, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված և «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվները, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված՝ հրավերին կցված ծավալաթերթով՝ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները կիրառվել են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, իսկ դրանց շեղումը ավել կամ պակաս չի եղել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացնելով «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու մասին որոշում՝ գործել է իրավաչափ պահպանելով Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ճանշին» ՓԲԸ-ի կողմից 03.03.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/35 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**